

Հ Ս Խ Հ Հ Ո Ղ Գ Ո Ղ Կ Ո Ս Ա Տ

ԼՈՐԴԱ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԶՈՒՄ ՓՈՐՁԱԿԱՑԱՆ

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

633
Հ-85

ԳՅՈՒՂՂՐԱՏ

1935

ՏԵՐԵՎԱՆ

Z U H U Z Z U U L + U U L C U U S
ԼՈՒՎԱ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԶՈՒՄ ՓՈՐՁՎԿԱՅԱՆ

633
2-85 ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄՐ.

ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

06. 2013

18429

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս խնդիրը, վոր հարվածային կոլտընտեսականների շարդ համագումարում դրեց ընկ. ՍՑԱԼԻՆԸ կոլտնտեսական հանրայնացված անասնապահական ֆերմանների և կոլտնտեսականների անհատական անասնապահության դարձացման մասին— այդ խնդիրը բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպություններից պահանջում ե ավելի մեծ ուշադրություն դարձնել կերի համար բաղա ստեղծելու հարցի վրա, վորն ապահովի հանրապետության անասնապահության հետագա վերելքը:

Մեր հանրապետության սոցիալիստական անասնապահության կերի գլխավոր ազգյուրներից մեկը մարդաւարուտային հոգերն են: Այդ հոգերը առաջ են մեր անաս-



23/1
38

նապահության կերի պաշարի 70%՝ ից
ավելին: Դրա համար ել 1 200.000 հեկտար
տարածություն բանող մեր մարզա-արոտա-
յին հողերի բերքատվության բարձրացման
միջոցառությունները բոլոր կուտննեսություն-
ների ու խորհանակեսությունների համար
որվա անհետաձգելի խնդիր են հանդիսանում:

Մեր ընդհանուր գյուղատնտեսության
մեջ մարդա-արոտային տնտեսությունը
գեռաւ ամենից շատ անուշագրության
մատնված ճյուղն ե հանդիսանում: Այստեղ,
ավելի քան վորեւ այլ բնագավառում, բա-
ցակայում ե կերային այդ վիթխարի տա-
րածությունների շահագործման նպատա-
կահարմար ու ճիշտ կարգավորումը: Կապի-
տալիստական մանր-գյուղացիական անար-
դյունավեհու, կողոպուտային հողոգտագոր-
ծումն այս բնագավառում ավելի շատ ե
թողել իր հետքերը, վորի հետևանքով մեր
արոտային տարածությունների մի զգալի
մասը մերկացել ու անասունների համար
անողությունները ժայռեր ե դարձել:

Մեր խորհանակեսություններն ու կու-
տնտեսություններն արդեն սկսել են ար-

մատախիլ անել կապիտալիստական հողոգ-
տագործման քայլացիչ աշխատանքի մա-
ցորդները՝ հակադրելով դրան խոտհարքնե-
րի ու արոտավայրերի ռացիոնալ ու հոգա-
տար ոգտագործումը:

Դեպի արոտներն ու խոտհարքները յե-
ղած այս վերաբերմունքը բղխում ե, բացի
կերի պաշարն ավելացնելու անհրաժեշտու-
թյունից, նաև մեր յերկրի լեռնային տես-
քից, վորովհետեւ գեպի այդ հողատեսքերն
անուշագործ ու անխնամ վերաբերմունք
ցույց տալն այն հետևանքը կունենա, վոր
նրանք դուրս կգան տնտեսական ոգտա-
գործումից:

Հայտնի յէ, վոր լեռնալանջերի խոտ-
հարքների ու արոտների հերկելն ու անա-
սուններով չափից գուրս ծանրաբեռնելը
նախ նոսրացնում ե մարդագետինների բու-
սականությունը, ապա լվանում ե հողը,
և հետագայում հողաշերտը բոլորովին սըր-
բելով՝ այդ հողամասերը վեր ե ածում բու-
սականությունից զուրկ մերկ ժայռերին:
Այստեղից ել բղխում ե լեռնային մարդա-
գործային հողերի պահպանության ան-

հրաժեշտությունը, վորովհետև նրանք վոչ
միայն լեռնալանջերը պահպանում են լվաց-
վելուց, այլև, վոր խիստ կարեռ ե նրանց
ճիշտ ոգտագործման դեպքում, իրենցից ցած
գոտնված դաշտային հողերի լավագույն պաշտ-
պանն են հանդիսանում այն սելավներից
ու հեղեղներից, վորոնք ցած են հոսում
բուսականությունից կամ անոտագից զրկված
մերկ լեռնալանջերից:

Դիտությունը մշակել ե մարդագետինների
ու արտների ուղինուալ ոգտագործման
ձևերը, հարկավոր ե միայն այդ ձևերը
սիստեմատիկորեն կիրառել յուրաքանչյուր
խորհունտեսությունում ու կուտանտեսությու-
նում:

Այս ե պահանջում ինչպես այդ հողա-
մասերի արտագրողականության բարձրա-
ցումը, այնպես ել լեռնային մարդարո-
տային հողերի արգավանդության վատնու-
մը կանխելու անհրաժեշտությունը, քանի
վոր այդ հողամասերը հանդիսանում են
ինչպես սոցիալիստական հողագործության,
այնպես ել սոցիալիստական անասնապա-
հության վերելքի հիմնական ֆակտորներից
մեկը:

Ս. Խափիալյան

ՄԱՐԴԱԳԵՏԻՆՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1934 թվին Համեկ(բ)կ կենտկոմի հու-
նիսյան պլենումը, վորպես կարևորագույն
մի խնդիր, կուսակցական կազմակերպու-
թյունների, հողային մարմինների, խորհ-
անականությունների, ՄՏԿ-ների ու կոլտըն-
տեսությունների ղեկավարների առաջ դրեց
մարգագետինների յեզ առօտավայրերի բարե-
լափիսն ու երանց բերքատվության բարձրաց-
ման խնդիրը:

Խորհուրդների 7-րդ համագումարն ընկ-
ընկ. Զերենովի ու Կալմանովիչի գեկուցում-
ների առթիվ ընդունած վորոշման մեջ
նշեց, վոր պետք ե արոտավայրերի, մար-
դագետինների բարելավման, խոտի բերքա-
հալաքի և սիլոսացման աշխատանքները

մացնել ԱՏ Կայանների ու կոլտնահսությունների արտադրական պլանների մեջ սկսած 1935 թվից արոտավայրերն ու խոտհարքներն ամրացնել կոլտնահսություններին ու մենատնահսունների խմբերին, կուսակցության և կառավարության այդ վորոշությունների հիման վրա, մեր խորհնանտեսություններն ու կոլտնահսությունները, յուրաքանչյուրն առանձին վերցրած, յելշնելով իրենց տնտեսության կոնկրետ պայմաններից՝ պետք և այնպիսի միջոցներ ձեռք առնեն, զոր ապահովեն մարդագետինների ու արոտների բարելավումը և նրանց բերքատվության բարձրացումը:

Այդ միջոցառություններն անհրաժեշտ են պատճառով, զոր մեր անառունների քանակն ավելանում և և հարկավոր և այդ անառուններն ապահովել կոպիտ ու հյուզա ստեղծելը սոցիալիստական անասնաման և հանդիսանալու մարդագետին զարգացման վճռական պայմաններում:

Խորհրդային Հայաստանը հարուստ և մարդագետիններով, և արոտավայրերով,

վորոնք ընդգրկում են 1.200.000 հեկտար տարածություն: Հանրապետության ընդհանուր կերպությունների մեջ այդ տարածությունները գերազանց են բոնում և հանդիսանում են անասունների կերպ գլխավոր աղբյուրը:

Սակայն ներկայումս այդ բնական մարդագետիններն ու արոտները սակավ բերքատու յեն, զորովհետև նրանց նկատմամբ բավարար խնամք չի յեղել: Դրա հետևանքով մարդագետինների խոտի բերքը փոքր եւ միջին հաշվով հեկտարից 9—10 ցենտներից չի անցնում: Բացի այդ, շատ մարդագետինները բոլորովին վշացել են և ոգտագործվում են վորպես արոտ, իսկ նրանց խոտի մեջ սննդատու բուսականություն քիչ կա:

Մարդագետինների բարեկավման և նրանց բերքատվության համար մղվող պայքարը պետք է տարվի ամեն տարի, սիստեմատիկաբար:

Մարդագետինների վշացման գեմ պայքարի ու նրանց բերքատվությունը բաձրացնելու համար հարկավոր և տիրապետել մարդագետային տնտեսությունը վարե-

լու բնակավառում յեղած մի քանի գիտեալ քաների:

Լոռվա զոնալ փորձակայանի յերեք տարվա (1932-34 թ.թ.) փորձերը մեզ ցույց տվին, վոր հենց միայն պարագայ ման միջոցով մենք կարող ենք մարդագետնի բերքատվությունը բարձրացնել 1-2 անգամ, հեկտարից 9-10 ցենտների փոխարեն 20-25 ցենտներ բերք սուանալ մյուս կողմից՝ դրանով բարելավվում և խոռափ կազմությունը, նրա մեջ գերազանց հասկավոր և լորագոր խոտարաւյսերը (յերեքնուկ և այլն):

Սակայն հիմնական միջոցառման հետ միասին, ինչպիսին պարարտացումն ե, վուրի մասին մենք կխոսենք ցածում, — մարդագետիներում պարզ ու հասարակ բարելավումներն ել նշանակալից եքեկտ կարող են տալ:

Այդ պարզ միջոցառումներից ամենահանրամատչելիները հետեյալներն են.

1. արոտները խոտհարքների վերածելը.
2. խոտհարքներից և արոտներից քաշեր հավաքելը.

3. թմբերը վոչնչացնելը.

4. ճահճացած տեղերը չորացնելը.

5. մոլախոտերի և թունավոր խոտերի դեմ պայքարելը.

6. դեպի մարդագետինները ճանապարհ, ներ անցկացնելը.

7. մարդագետիններում բազմամյա խոռափույսերի սերմ ցանելը.

8. պարարտացումն ինչպես հանքային, այնպես ել որդանական պարարտանյութերով:

1. ԱՐՈՏՆԵՐԸ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԵՐԱԾԵԼԸ

Հանրապետության կերի ռեսուլյաները մեծացնելու միջոցառումների մեջ կարենք տեղերից մեկն և բանում արոտների մի մասի խոտհարքներ գարձնելը: Մեր հանրապետության մարդարարության հողերի գիտական հետազոտությունները ցույց են տվել, վոր յեթե տվյալ արոտավայրում վաղ գարնանից մինչև խոտհունձ անսառուն չարածեցվի, ապա այդ հողամասից նույնքան խոտ կարելի յե հնձել ինչքան խոտհարքից: Հայաստանում բոլոր արոտների 20-

25 տոկոսը կարելի յե վերածել խոտհարք ների:

Այս միջացառումը կոլտնտեսությունների համար շատ մատչելի յե, վոչ մի հիմա կան ծախս չի պահանջում և տնտեսական մեծ եֆեկտ և տալիս: Վերջին 2-3 տարվա ընթացքում կոլտնտեսությունները Հայստանի արոտավայրերից ավելի քան 25.000 հեկտար խոտհարքի յեն վերածել:

2. ՔԱՐԵՐ ՀԱՎԱՔԵԼԸ

Լեռնային մարդագետիններում քարերը հանդիսանում են այն հիմնական չարիքը, վոր կրծատում են խոտհարքի ողտակար տարածությունը և դժվարացնում մեքենայի դորձադրումն այդ խոտհարքներում: Դրա համար ել անպայման հարկավոր և խոտհարքներից ու մարդագետիններից քարերը քելը պետք է կազմակերպել վաղ գարնանը:

Սակայն վոչ բոլոր քարերը պիտի համարքել: Յեթե քարերը շատ մեծ են և խորթաղված հողի մեջ և մահավանդ գտնվում

են լանջերի վրա, ապա այդպիսի քարերը հանել չի կարելի, վորովհետև դրանից հողը կլվացվի և կբացվի ստորին հողի շերտը:

3. ԹՄԲԵՐԸ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

Մարդագետիններում ընկած հողաթմբերը խոշոր վաս են հասցնում: Նրանք կանգնեցնում են ջրերը և նպաստում են մարդագետինների ճահճացմանը: Բացի այդ, հողաթմբերը նվազեցնում են խոտհարքի ոգտակար տարածությունը և դժվարացնում են խոտհանձող մեքենաների զործադրությունը այդպիսի վայրերում:

Այս բոլոր վասներից կարելի յե խուսափել միայն այն գեպքում, յերբ մեր կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն ամեն ատրի վոչնչացնեն իրենց մարդագետիններում յեզած հողաթմբերը:

Թմբերի վերացումը պետք է կատարել կամ վաղ զարնանը, վորպեսզի նրանց տեղը խոտհումնի, կամ աշնանը՝ խոտհանձից հետո:

Թմբերը սովորաբար մաքրում են հատուկ թումբ կտրող մեքենաներով կամ բահերով և այլ զործիքներով:

4. ՃԱՀՀԱՅԱԾ ՀՈՂԱՄԱՍՈԵՐԻ ԶՈՒՑՈՒՄԸ

Խորհրդային Հայաստանի մի շարք շըրջամասիւմ (Սահփանավան, Կիրովական, Ներքիջան և այլն) մարգագետինները վնասվում են չափից ավելի խոնավությունից: Խոնավության առատությունից մարգագետինը թացանում է, իսկ թաց հողամասի վրա սննդարար խոտաբույսերի (յերեքնուկ, շյուղախոտ, սիզախոտ) հետ բուանում են նաև սակավ սննդարար խոտաբույսեր (բոշխ, մամուռ և այլն), ըստ վորում մասմուն արագորեն խոշոր տաքածություններ ե բռնում, խոնավությունը պահում ե իր մեջ, տաքությունը դժվարությամբ ե անցկացնում հողի մեջ, դանդաղեցնում ե խոտի քըլ, վորի հետևանքով ել մարգագետնից քիչ բնաք ե ստացվում:

Խոտհարքային մարգագետնի ձահճացման դեմ պայքարելու համար մի քանի պարզ մելիորատիվ աշխատանք պիտի կատարել: Ձահճացման տեղերը չորացնելու համար խիստ խոնավ տեղերը մի քանի առու պիտի

5. ՊԱՅՔԱՐԸ ՄՈՒԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Հարկավոր ե պայքար կազմակերպել նաև մոլախոտերի և թունավոր խոտերի դեմ, վորոնք դանդաղեցնում են մարգագետնի արժեքավոր խոտաբույսերի աճը: Բացի այդ, մոլախոտերից մի քանիսը թունավոր են, կամ կաթը փչացնում են:

Կաթը փշացնող մոլախոտերն են՝ վայրի սխտորը, գոնգեղը (սրենկա), զանազան սոխուկներ և այլն:

Թունավոր մոլախոտերից պետք ե հիշատակել քարախոտը (ЖИВОКОСТ), սպիտակ անգուսը և այլն: Կան և կոշացողուն խոտաբույսեր—ծիաթը թնջուկ, դանտոնիա, պկվախոտ (սրնգեղեկ) և այլն, վորոնք խիստ աճում են մարգագետիններում և հաճախ ահագին տարածություններ են բռնում:

6. ՀԱՄԱՊԱՍԱԽԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԴԵՎԻ ՄԱՐԴԱԳԵՏԻՆՆԵՐԸ

Ուսմ հայտնի չե, վոր մինչև այժմ շատ կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների մարգագետիններում ու արոտա-

վայրերում դեռ հողաշինարարական աշխատանք չի կատարված, այդ հողամասերը գեռառանձին հողաբաժինների չեն բաժանված, համապատասխան ճանապարհներ չեն անց-կացված, դրա համար ել խոտանձի ժամանակ մարդագետիններում ստեղծվում են բազմաթիվ ճանապարհներ, վորոնցով անցնում են փուրգուններ, սայլեր, տրակտորներ և այլն:

Այս հանգամանքն ինքնարերաբար կը բատում ե խոտհարքների ոգտակար տարածությունը և վնաս և հասցնում խորհունտեսություններին ու կուտնատեսություններին: Բացի այդ, առուների վրա կամուրջներ չեն շինվում, իսկ այդ դժվարացնում ե հողամասերի խոտը դեպի փերմաները փոխադրելու դորձը:

7. ՄԱՐԳԱԿՑԵՑԻՆՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՄ ՃԱՆԵԼ

Դեռ 1934 թվին Համ Կ (թ)Կ Կենտկոմի հունիսյան պլենումը ԽՍՀՄ Հողժողկոմատին պարտավորեցրեց առնվազն 2000 ցենտ-

ներ վայրի խոտաբույսերի սերմ մթերել և ցանել մարգագետիններում ու արոտավայրերում:

Կուսակցության այս դիրեկտիվը իրագործելու համար կուվազոնալ փորձակայանը հատուկ եկապեղիցիայով կոռվա ցեղաբուծական տնտեսության խոտհարքներում կազմակերպեց բազմամյա վայրի խոտաբույսերի սերմի հավաք և ստացավ մինչև 12 ցենտաներ խոտաբում: Հավաքվեց շուրջախոտի, ականթելեմոնի, ցորնուկի, կորնգանի և այլ խոտաբույսերի սերմացու: Կայանի տրամադրության տակ յեղած սերմացվի այս փոնդն ոգրտագործվելու յե վայրի խոտաբույսերի սերմնաբուծարանը մինչև 20 հեկտար ընդարձակելու և, մյուս կողմից՝ կոռվա հարթավայրի մարգագետիններում փորձնական լայն ցանք կատարելու նպատակով:

Յուրաքանչյուր կոլտնտեսություն և խորհունտեսություն պետք ե մեր կայանի որինակով ամեն տարի կազմակերպի վայրի խոտաբույսերի սերմի հավաք, վորպեսպի ստեղծի իր սեփական սերմնաբուծարանը և

մասամբ եւ ոգուագործի մարդագետին ներում ցանելու նպատակով, մինչև վոր մեկ յերկու տարուց հետո սերմեարուշ ծարանները մեծ քանակությամբ սերմ կտան և կարելի կլինի ավելի ընդորձակ տարածությունների վրա ցանք կատարել։
Ի՞նչ ոգուատ կտա մարդագետիններուց վայրի խոտաբույսերի սերմ ցանելը։

1. Մարդագետինների բերքատվությունը կբարձրացնի մեկ ու կիսից մինչև յերկու անգամ։

2. կբարձրացի մարդագետնի խոտի կաղմը՝ հարստացնելով այն այնպիսի խոտաբույսերով, ինչպիսիք են՝ շյուլախոտը, ականթելմոնը, յերեքնուկը, ցորնուկը և այլն։

Խոտաբույսերի ցանքը կարելի յե կատարել առանձին կուլտուրաներով, սակայն ավելի լավ ե կատարել հետեւյալ խառնուրդներով՝ յերեքնուկ-տիմոփենկա-շյուլախոտ-կորնդան-ցորնուկ կամ ուայդրաս և այլն։

Վայրի խոտաբույսերի ցանքը կարելի յե կատարել հողը փոցինելով, կամ առանց փոցինելու։ Պետք է յենել տեղական հողա- յին պայմաններից։ Խորհուրդներ ստանալու

համար պիտի դիմել շրջանային ազգանոմին։ Իսկ ընդհանրապես փոցինելու նկատմամբ շատ զգույշ պիտի լինել վորովինեան խոր փոցին անելու, զեպքում բուսականության կիսից ավելին կջլատվի, ըստ վորում այդ վիճակին կենթարկվեն ինչպես մոլախոտերը, այնպես ել բուսականության արժեքավոր տեսակները։ Ցեթե հողն աղքատ և մոլախոտերը, վորպես ավելի սակավապես բույսերը շուտ կպարարտանան, զեբակլաող տեղ կբանեն և այդպիսով մարդագետինը կիշանա։

8. ՄԱՐԴԱԳԵՏԻՆՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

Լոռվա զոնալ փորձակայանը բնական մարդագետինների պարարտացման փորձերն սկսել ե դեռ 1932 թվին։ Լոռվա ցեղաբուծական խորհանութեանը յան հողամասերում և 1934 թվից՝ Ստեփանավանի շրջանի Կալինինո և Սարատովկա գյուղերի կոլտնտեսությունների մարդագետիններում։

Ինչպես վերը նշեցինք, մեր մարդագետինները խոտի քիչ բերք են տալիս՝ հեկտարից 9—10 ցենտներ։
Ի՞նչն ե սրա պատճառը։

Պատճառն այն է, վոր ամեն տարի մարտկոցիններից խոտ և հնձվում, իսկ այդ խոտը հողից վերցնում և իր սննդանյութերը, այն և՝ ազոտ, կալիում, ֆոսֆոր և այլն.

Ինքնին հասկանալի յէ, վոր յեթե ամեն տարի հողից սննդանյութերը վերցվի և փոխարենը նրան վոչինչ չտրվի, ապա տարեց տարի հողի մեջ յեղած սննդանյութերի քանակը կվակասի, հողը կաղքատանա և քիչ բերք կտա.

Դրա համար ել անհրաժեշտություն և առաջանում՝ վերը նշած մյուս միջոցառումների հետ միասին մարդագետինները սիստեմատիկաբար պարարտացնել:

Մարդագետինների պարարտացումը կուրելի յէ կատարել՝

1. հանքային պարարտանյութերով.
2. գոմազլրով և կուաջրով.

Լիակատար հանքային պարարտացման ազգեցությամբ խառն խոտակազմով և հաշահատիկային խոտակազմով՝ մարդագետիններում բերքատվությունը բարձրանում է մոտ 3 անգամ, այսինքն՝ հեկտարի բերքը 8,5 տեսաներից հասնում է 23—24 տեսաների, իսկ հասկախոտ բոշխախառն մարդագետնում՝ հեկտարի բերքատվությունը 12,5 տեսաներից հասնում է 35 տեսաների:

Ահա հանքային պարարտացման 1934 թվի վրորձի արդյունքները.

Պորձի վարկանշը՝ ները դաշտադան պարարտանյութը՝ Բերքի բարձրութեանը՝ ման դաշտանը՝	Խոտակազմով՝ ունեցողը մարդագետիկային ընթացակազմով՝ Հեկտար կազմով՝ բերքը տրվութանը՝ ներով՝	Բաշխականությունը՝ մարդագետիկային ընթացակազմով՝ ամի նկատմամբ՝ ներով՝	Բաշխականությունը՝ մարդագետիկային ընթացակազմով՝ ամի նկատմամբ՝ ներով՝	Բաշխականությունը՝ մարդագետիկային ընթացակազմով՝ ամի նկատմամբ՝ ներով՝
Փորձի վարկանշը՝ ները դաշտադան պարարտանյութը՝ Բերքի բարձրութեանը՝ ման դաշտանը՝	8,5 17,2 12,5 24,7 28,3	100 202,3 147 290,5 333	12,5 22,5 14,3 32,5 35,1	100 180 114,4 260 260,8
Աղոտ պարարտացման աղոտ փոռը ։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։
Աղոտ փոռը ։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։
Աղոտ փոռը ։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։	։ ։ ։ ։

Աղոտը հոդն և մտցված փորպես սուլ-
ֆատ-ամոնիում, ֆոսֆորը՝ վորպես սու-
լիքրֆոսֆատ, կալիումը՝ վորպես կալիա-
կան աղ՝ հեկտարին 60 կիլոգրամի չափով:

Ինչպես վերոհիշյալ աղյուսակից յիշե-
վում եր, ամենամեծ արդյունքը տալիս ե-
ազոտային պարաբռացումը և մի քիչ պա-
կամ՝ ֆոսֆորայինը:

Նախորդ տարիների փորձերն ել նման
ալյալներ են ունեցել:

Զափաղանց կարեռ նշանակություն ե-
ստանում այն պարաբռայութը, վոր
ստացվում ե հենց նույն տնտեսություն-
ներում վորպես գոմազբ: Անասնապահա-
կան սոցիալիստական խոշոր տնտեսու-
թյուններում՝ կոլտնտեսություններում ու
խորհանտեսություններում ամեն տարի
մեծ քանակությամբ գոմազբ և հավաքվում,
վոր հարուստ և որգանական նյութերով և
մեծ արժեք ունեցող պարաբռանյութ և
հանդիպանում: Բացի գոմազբից, անասնա-
պահական խորհանտեսություններում ու
կոլտնտեսություններում ամեն տարի մեծ

ջուրն իր մեջ ունի աղոտի հեշտությամբ
լուծվող միացություններ, և յեթե այն
մարդագետին փոխազրկի, այդ մարդագետ-
նը բերքատվությունն ավելի քան յերկու
անգամ կը բարձրանա:

Մեր խորհանտեսություններում ու կոլ-
տնտեսություններում գոմազբի ու կուաջըի
ճիշտ պահպանման խնդիրն որվա անհետա-
ձգելի խնդիրներից մեկն ե:

Բերենք այն տվյալները, վորոնք ցույց
են տալիս, թե գոմազբով պարաբռացնեն
ինչ արդունք ե տվել մարդագետիններում:

(աղյուսակը տես հաջորդ էջը)

Առանձին հարտ համարվուա-		Բողոքակից համարվուա-	
Վարչական գործադրութեալ	Խոստացութեալին եւը	Խոստացութեալ	Գործադրութեալին եւը
Փամապանութեալ պարագաներու	Հեկտարի մի-	Անսարդը 0/0	Անսարդը 0/0
նելու գործութեալ պարագաներու	Հեկտարի մի-	0/0 առաջ հաղա-	0/0 առաջ հաղա-
մասնի համարվուական գործութեալ	մասնի համարվուական գործութեալ	2ին բերվու	բու հողա-
		յենանելու	մասի համար-
			մասությամբ
Առանձին գործադրութեալ		10.5	100
գործադր	10 առնեն	13.5	128.5
»	20 »	16.6	158.1
»	30 »	19.3	183.8
»	40 »	22.4
			26.6
			235.4

Ինչպես այս պայուսակից և յերեսում, մեկ հեկտար մարզագետինը 30 տոնն գոմազ բու պարարտացնելուց նրա բերքատվությունը համարյա յերկու անգամ ավելանում է:

Ստեփանավանի շրջանի մի քանի կուտանսություններ արդեն մարզագետինները գոմազրով պարարտացնելու և այլական նրանց բերքատվությունը բարձրացնելու արտադրական փոքր ունենալու համար խորհուրդ և տրվում գործադրել գոմազը՝ հեկտարին 30—40 տոննի հաշվով և այս մացնել հողը վաղ գարնանը:

Գոմազը գրական ներդործությունը տեսում է 4—5 տարի:

Գոմազը մարզագետնում ջաղ և տրվում ձեռքով, վորից հետո սովորաբար մարզագետինը մի քանի յերես փոցիմում և փոցիով:



023

Թարգմ. Հ. Հաբուրյունյան, Պատ. իմբ. Ս. Խաչհալյան
Արթագր./Հ. Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր Հե 9-89

Հրատ Հ 211, պատվեր Հ 271, տիրաժ 3000

Հանձնվել է արտադրության 1935 թ. ապրիլի 20-ին
Ստորագրված է սպազմելու 1935 թ. մայիսի 13-ին

Գյուղաբանական, Յերեան, Նալլանցան 50


ՀՀ Ազգային գրադարան



NL0280444

10 ԿՈՊ.

18429



Н. ОГАНЕСЯН

Поднятие урожайности
лугов

Сельхозгиз

1935

Эривань